

ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ


Պուլիարից համար
ցարեկան ֆրբ. 10

Վեցամսեայ " 5

Արտասահման
ցարեկան ֆրբ. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ

Գրութիւնք Նա շին
արուիր:

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN


BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Երե կ'ուզեմ «Հայերի» ին մեջ աղոտ երեւնալ.

Պարսիք սիրուն եւ ազնիւ դեմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ



ԳԱՂԹԱԿԱՆԱՅ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԽՆԴԻՐԸ

Եւրոպայեան Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Գէորգ Եպիսկոպոս Իւթիւճեան՝ ասիկէ առաջ տեղեկագրած էր Պատրիարքարան թէ, Ամերիկայէն իրենց հայրենիք վերադառնալ ուզող հայեր Մարտէլի մէջ մնալ դատապարտուած են, վերադարձի համար օսմ. իշխանութեանց կողմէ յարուցուած դժուարութիւններու պատճառաւ, և այս տնտանեկի կացութեան գարմանը խնդրուած էր: Արդ Ս. Պատրիարքը իմացուցեր է Իւթիւճեան Սրբազանին թէ հարկ եղած տեղերը դիմումներ ըրած է. որոնք խոտաւցած են հրահանգ տալ արտասահման դուրսուող Օսմանեան ներկայացուցիչներուն որ իրենց հայրենիքը վերադառնալ ուզող ամեն հայերուն որոնք ԱՆԱԶԱՐՏ վարմունք մը ունեցած են, անցագիր տրուի և Թիւրքիայի նոսահանգ խաներն ալ զժւարտութիւն չի

հանուին ատոնց դէմ: Հետեւեալ վերադառնալ ուզող ալգայինք պարտաւոր են ճամբայ ելած ատեն անցագիր առնել այն քաղաքի կամ երկրի Օսմ. հիւպատոսէն ուր իրենք պարած են. առանց անցագրի ճամբայ ելնողներու համար ուրիշ երկիրներու մէջ անցագիր առնելը անկարելի դարձած է:

— Անցեալ նոյեմբեր ամսոյ մէջ Ազգ. Հիւանդանոցի եղած գրամական նուիրատուութիւնները հասած են 11,877 զրուշի:

— Ուսումնական Խորհուրդը իր վերջին նիստին մէջ որոշեր է կիրակնօրեայ դասընթացք մը հաստատել ուսուցչական այն ընտրելիներուն համար որոնք կը փափագին պատրաստուիլ յառաջիկայ շրջանի վկայականի քննութեանց, ինչպէս եւ այն ուսուցիչներուն որոնք աստիճանի բարձրացման համար պիտի ուզեն Քննիչ Յանձնաժողովին նորէն քննուելու: Սոյն հրապարակա-

յին դասախօսութիւնները տեղի պիտի ունենան եղեր ազգ. առաջնակարգ ուսուցիչներու կողմէ անձնութիւնաբար և պիտի տւեն 1900 փետրւ.է մինչև յունիս վերջ:

ՄԱՂ

ՏՕՔԹ. Ե. ԹՈՎՄԱՍՍԵԱՆԻ

Դեկտ. 16 Հինգշաբթի օրը Վառնայի Հայ գաղթականութիւնը կարևոր կորուստ մը ունեցաւ յանձին Տիար Տօքթ. Ե. Թովմասեանի, որ յետ սակաւօրեայ տաժանելի հիւանդութեան իր մահկանացուն կնքեց 35 տարեկան հասակին մէջ: Հանգուցեալը լաւ համբաւ մը կը վայելէր հանրութեան մէջ իբր ճարտար բժիշկ և պարկեշտ անհատ մը:

Յուդարկաւորութեան տխուր հանգէսը կատարուեցաւ երէկ Ս. Սարգիս եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Պուլկարիոյ աջելու հովիւ Գեր. Տ. Բարթոլոմէոս Վ. Պաղճեանի, որ յատկապէս հրաւիրուած էր Շումլայէն, և որ հակիրճ դամբանականով մը դրուատեց հանգուցելոյն բարեմասնութիւնները: Ամէն աղգէ յուդարկաւորաց հոծ բազմութիւն մը կը հետևէր դագաղին. ներկայից մէջ կը տեսնուէին մէկ քանի կառավարութեանց գերհիւպատոսները, յոյն եկեղեցւոյ երկու աւագ քահանաները, հայ և օտարազգի վաճառականք և Վառնայի գրեթէ ամբողջ բժշկական մարմինը: Դագաղին ծոպերը բռնած էին բժիշկները, իսկ ջահերը՝ բարեկամները: Տասներկու ծաղկեպսակներ զրկուած էին ընտանիքի և բարեկամաց կողմէ. Վառնայի բժշկական մարմինը իրեն յատուկ ծաղկեպսակը ունէր, զոր կը տանէին Տիար Տօքթ. Ա. Աթապէկ և Տօքթ. Զաթարոֆ: Յուդարկաւորաց թափորին յամբարայլ կը հետևէր հանգուցելոյն սեպհական կառքը, որուն լապտերները մարելու ժոտ կը պլպլային և որուն ձիերուն գլուխները սև շղարշներու մէջ առնուած էին. այս տեսարանն ալ յուզիչ և ազդեցիկ էր:

Տօքթ. Թովմասեան վշտակիր ծերունի մայր մը, եղբայր մը, դեռատի այրի մը և մէկ քանի ամսեայ աղջիկ զաւակ մը կը թողու:

Խմբագրութիւնս կը փութայ այս տխուր առթիւ իր ցաւակցութիւնը յայտնել թովմասեան և Պարոնեան ընտանեաց և կը մաղթէ երկնից մխիթարութիւնը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴ

Խորհուրդս մասնաւոր հրահանգով մը յանձնարարած է Պ. Սիրաբ Մարգարեանի, նախորդ Պատ. Թաղ. Խորհրդոյ պաշտօնավարութեան օրով, առաջուրնէ, պսակդրամէ և թաղումէ մնացած ապօրինկներու գանձումը: Այս առթիւ կը խնդրուի արգոյ ազգայիններէն որ հաճին իրենց պարտքը անյապաղ յիշեալին վճարել, նաև չիզանալ այս մասին հարկ եղած գիւրութիւնները ընձեռնելու յօդուտ Ս. եկեղեցւոյս:

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ

Ատենադպիր

Ատենապետ

Ս. ԳԱՐԻԷԼԵԱՆ Ե. Մ. ԹՈՎՄԱՍՍԵԱՆ

Վառնա, 16 դեկտ. 99

— Մեծայարգ Պ. Գ. Զանչեանց, որուն «Որբերու խնամակալ» տիտղոսը տուած էր արժանաւորապէս Ս. Պատրիարք հայրը՝ իր օրհնութեան կանգակին մէջ, այս անգամ նոր դումար մը դրած է ն. Սրբազնութեան տրամադրութեան ներքե, ու թերորդ որբանոցի մը բացման համար. նպաստից Յանձնաժողովը նկատելով որ Մուշի առաջն. տեղապահ Տ. Բաբգէն վարդապետի կողմէ հաղորդուած տեղեկութիւնները անհրաժեշտ պէտք յանձնած էին Մուշի մէջ աղլըկանց որբանոց մը բանալու, որոշեց այդ նպատակին յատկացնել ուսասնայ բարերարին նպաստը:

— Բացի Ուրֆա զրկուելիք 100 ոսկիի գումարէն, նպաստից Յանձնաժողովը որոշեց նաև 50 ոսկի Ակն, 25 ոսկի Կիւրին և 20 ոսկի Էլպիսթան զրկել:

— Սինկաբուրի ազգայիններէն Պ. Տիգրան Սարգիս այդ հեռաւոր ու օտար միջավայրի սակաւթիւ Հայերէն 40 անգլ. ոսկի հանգանակելով զրկած է Իզմիրի Որբանոցին:

— Թագուոր էֆ. Սպարթալեան իր վաճառատան մէջ ընդունեց է Մկրտիչ Տ. Մանուէլեան անուն Տիարպէքիւրցի որբ մը, յարմար թոշակով մը ապահովելով անոր ապրուստը և օրինակ հանդիսանալով Իզմիրի միւս հայ վաճառականներուն:

— Կարինի նահանգէն արմտիք դուրս հանելն արգիլուեր է մինչև առաջիկայ տարիի հունձքի ժամանակ, որովհետեւ այս տարիի հունձքը նախորդ տարինէն բազմատոմամբ հարիւրին 30 պակաս եղած է:

— Երուսաղէմի մէջ երկրագործներուն օգնելու նպատակով նոր դրամատուն մը պիտի հաստատուի 450,000 մարք դրամագլխով: Պէրլինի հրեայ սեղանաւորներն արդէն իսկ ամբողջովին գներ սպառեր են այդ նորակազմ դրամատան հրապարակ հանած արժէթուղթերն որոնց տմեն մէկը 1000 մարք արժէքին ունի:

Պուլկարիոյ Եղեմոսֆը

Պուլկարիոյ ելեմոսֆին շահագորգողութեան տէնտիքաներու ներկայացուցիչները Սօֆիա գացած են բանակցութիւնները ուղղակի Պուլկարիոյ ելմտական նախարարին հետ շարունակելու համար: Պանքաները կառաջարկեն հարիւրին 85ով կատարել նոր փոխառութիւնը, բայց Պուլկար կառավարութիւնը չընդունիր այդ գինը: Եթէ համաձայնութիւն մը չգոյանայ, Պուլկարիա պիտի բաւականանայ չորս միլիոն ֆր. փոխառութեամբ մը՝ յունուարի կտրոնները վճարելու համար: Բուն իսկ փոխառութեան խնդիրը յառաջիկային պիտի թողուի:

— Սոպրանիէն 300,000 ֆր. վարկ մը քուէարկեց Ռուսիոյ Ալեքսանդր Գ. կայսեր համար յիշատակարան մը կանգնելու նպատակով:

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍԲԵՐ

Տղան իր առած կրթութեանը համեմատ կամ մրցանակ մը և կամ պատիժ մը կըլլայ իր ծնողացը: Հետեաբար դաստիարակներու ընտրութեան տոնն ամեն ջանք 'ի գործ գնելու է բարիները պաշտօնի կոչելու:

— Եթէ կարենաս պարգութեամբ ինքզինքդ գեղեցկացնել, պռավօ՞ք ես:

— Լաւ գիրք մը և լաւ կին մը ամենէն պատուական բաներն են անոնց արժանիքը գնահատել գիտցողին համար:

— Համագամ և շատ կերակուրներէ աւելի՝ հրաւիրեալներու զուարթութիւնն է որ հաճոյքի մը փայլը կ'աւելցնէ:

— Ինքզինքդ աղէկ բարեկամ կամ ազգական մի՛ փնտեր:

— Լեզուէ աւելի զօրաւոր բան չիկայ, անով ապագայ մը կը շինուի, դործ մը կը յաջողի, բարեկամութիւնը կը բազմապատկի. անով է դարձեալ որ ապագայներ կը բանդին, ընտանիքներ կը փճանան և կեանքիւ կը զոհուին:

— Սէրը ապուրի կը նմանի, առաջին դգալները միշտ շատ տաք սև վերջին դգալները պաղ կըլլան:

— Գեղեցիկ բնաւորութիւնը հանձարէն սև տաղանդէն լաւագոյն է:


— Երկու բան կրնան մարդս երջանիկ ընել. փափագներու չափաւորութիւնը եւ ունեցածին խելացի գործածութիւնը:

Ս. 2.

ՀՈՎԱՍՈՒՆ

Սիրուն բանաստեղծութեանց հատորիկ մըն է, ընթերցանութեան արժանի, որ կրնայ կաղանդի առթիւ ալ իբր նուէր տրուիլ: Գինն է 25 սանդիմ. շատ առնողներու համար չափաւոր զեղջիմել Զարպհանէլեան գրատուն Վառնա

ԶԱՆԱԶԱՆՔ



Սիսի պաշտօնականներուն երդման
մէջ. — «Եթէ հաւատարմութենէ շեղիմ,
արեւնս դուրս պոսթկոյ մարմնոյս ամեն կող-
մերէն, կայծակը երկու կտոր ընէ մարմինս,
զիս կոկորդիլոսները ուտեն, դժոխքին մէջ
անտակ դոյլերով ջուր կրելու դատապարտ-
ուիմ: Մահունէ վերջը հոգիս գերիի մը
մարմինը մտնելով՝ անպատի աւագներու,
ծովու ջուրերու կաթիլներու շափ տարիներ
չարչարանքի ենթարկուիմ, կոյր, կաղ, խուլ
և բորոտ մուրացկանի մը պէս դարձեալ աշ-
խարհ գամ և վերագառնամ դժոխք»:

— Դայեակ մը ֆրանսացի գիւղերէն
մէկուն մէջ գիշեր ատեն Արքեպիսկոպոսի մը
ամարանոցէն կը կանչուի, աղախիններէն մէ-
կը դարմանելու համար: Հետեւեալ օրը դայ-
եակը անձնագովութեան համար իր տանը
դրանը վրայ տախտակ մը կը կախէ վրան
ստպէս գրուած.

«Նորին Սրբազնութեան դայեակը»:

Կեղծ ակոսները ծերերուն վնաս-
ակաւ. — Տօբթօր Սեմսըն, Պոսթընի ա-
կադէմիէն, կը հաստատէ թէ կեղծ ակոս-
ները ծերերուն վնասակար են, որովհետեւ
եթէ բնութիւնը թափել կուտայ իրենց ակ-
ոսները, կը նշանակէ որ իրենց կը յիշե-
ցնէ թէ այդ տարիքին պէտք է բանջարե-
ղէններով անանին: Շատ բժիշկներէ ստուգ-
ուած է այս:

Հիսնադի հագուստ մը. — Բրէնսէս
Չարթօրիսքի յանձնարարեց շրջագրեստ մը 'ի
Բարիզ, որուն թէկերը զարդարուած պիտի
ըլլան ադամանդներով, սպիտակ յատակի մը
վրայ: Այս նպատակին համար քարեր, ծակ-
ուեցան և իրենց արժէքը նուազեցաւ թէկ,
բայց զգեստը, ինչպէս որ է, կարժէ 15
հազար անգղիական ոսկի:

Հաւագոյն մարմնամարզը. — Մար-
մնամարզի ամենէն լաւը բրնձն է, վասն զի
մարմնոյ ամէն ջիղ, գնդեր, երակ և շնչե-
րակ զօրեղապէս կը մարզուին նոյն միջոցին:

Կողոպտուած Նախագահուի մը. —
Կուսակցական (Ամերիկա) հանրապետութեան
նախորդ նախագահին կինը, որ 10 միլեոն
տոլարի ահագին հարստութիւն մը ունէր,
քանի մը խաբէքաներու զոհ երթալով, ամ-
բողջ հարստութիւնը կորսնցուցեր է, և հի-
մա իր օրական ապրուստը ճարելու համար
գերասանութիւն կընէ:

Կապիկներու միջոցաւ ոսկի փնտը-
նել. — Շատ տարիներէ ի վեր հարաւային
Ափրիկէի ոսկիի հանքերուն մէջ գտնուող հաւ-
իւրապետ Մովսէս՝ կապիկներուն ոսկի փնտը-
ռելու մասին ցոյց տուած ճարտարութիւնը
հետեւեալ կերպով կը պատմէ Պէրլինի գի-
տական հանդէսի մը մէջ:

«Ոսկիի հանքերու մէջ բովս ունէի 24
կապիկ, որ ոսկեհանքերու մէջ արտաբոյ կար-
գի ծառայութիւններ կը մատուցանէին: Գոր-
ծաւորներէն շատերը մինչդեռ ոսկի գտնուած
տեղերը չէին կրնար որոշել, կապիկները որ
գործաւորներու բոլորտիքը կը պտտէին շա-
րունակ, մեծամեծ ոսկիի կտորներ գտնելով
զանոնք ցոյց կուտային գործաւորներուն: Կա-
պիկներէն ոմանց փոքրիկ սայլեր յանձնուած
էին, որոնք գործաւորներուն չտեսած ոսկի-
ները հաւաքելով իրենց սայլերուն մէջ կը լե-
ցընէին ու գործաւորներուն կը բերէին»:

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

ԲԵՐԱՑԻ ԿԻՆԸ

Պոլսոյ Բարիպուհները:

Բայց այնքան Բարիպուհի որքան Մէ-
թաքսաի բօնեաբները՝ բօնեաբ. դուրսէն
կրնաք խաբուիլ, բայց մէջը նայելու չի գար-
չի կարծուի սակայն թէ Բերացի կինը ներ-

սին խնամք չի տանիր որքան դուրսին . ընդհակառակը : Բերացի կինը , երբ հագուելու կելլէ՝ ձերմակեղեններու մեծ հոգ կը տանի , իրեն անանկ կուգայ որ փողոցին մէջ անպատշաճ պիտի իյնայ , գլխի վայր :

Կրնայ մաքուր աշխարհաբառ գիտնալ , բայց դիտմամբ զէշ կը խօսի տիրացուական չգիտեմ ինչ մը շունենալու համար , և կը սիրէ մատ մը պակաս աշխարհաբար գիտնալ Գատը-գիւղի կիներէն մատ մը վեր ըլլալու համար :

Ամեն իրիկուն , օգը բաց եղած ատեն , Թագսիմէն մինչև Պօն Մարշէն կը բալէ եւ իրիկունը աւշ տուն կը վերադառնայ իր պարտականութիւնները անթերի կատարողի մը գոհացումով :

Իրեն համար աշխարհք Մատամ Պէկէի խանութէն կը սկսի և Լիւքսեմպուրկի ապահանջներուն առջև կը վերջանայ :

Եւրօքէ-գալտըրըմէն երբէք չանցնիր՝ Իւսկիւտարցի չի կարծուելու համար :

Բերայի մէջ կան կիներ որ զաւակի մը ինչպէս ծիծ տալու է չեն գիտեր , բայց հատ մը չէք գտնել որուն անծանօթ ըլլան Քուշ հէնճը , Փոջը , ապաքաժը , մեծագոյն բօթօթներուն անունը և քօնքօրտիայի վերջին երգը :

Բերայի մէջ վստացող անպարկեշտ կիներէն զանապանուելու համար , փողոցին մէջ անանկ մը կը բայեն որ պարկեշտը՝ անպարկեշտին հետ շփոթել կը փորձուի :

Տուններուն մէջ բանիբուն , բայց փողոցըն են օրն ի բուն :

Ամերիկացիներուն պէս , մեր պառկած ատենը կարթննան և (վիս վեռաս) :

Ֆրանսերէն մը կը խօսին զոր միայն խանութպանները կը հասկնան :

Տասնըջորս տարու աղջիկ մը 30 տարու կնկան մը հոգիքը ունի և բառսուն տարեկան կին մը տասնըութ տարու աղջկան :

Պւզած ատեններն կը պառուենան :

Կը ծխեն , կը խաղան , կը ճամբորդեն , էրիկնուն հետ ամիսներով բէն կը պահեն , քանքասանքէ չեն վախնար , այսու հանգերձ աւելի դիւրին է կրեւսուն կին խաբել Թօփ-Քաբուի կամ Մաքրի գիւղի մէջ բան մէկ հատ մը ի բերա :

Եթէ վերցունես Բերայէն՝ Բրթի Շանը , Պօն Մարշէն , Թէմիսթոկլին , Հաճօքուլօ խանը , Մատամ Բէրէն , Բիկմալիոնը , Սըլանտիտը , և Մկրեան Տէր Հայրը , Բերացի կիներ պիտի խամբէր ջուր չի տեսնող ծողկի մը պէս :

Ազատամիտ և քիչ շատ եւրոպականացեալ , սակայն «խաչակիր» բահանան իր աղօթագիրքերու մեծագոյն մասը Բերա կսպառէ ուր սակայն ամենէն նուազը կաղօթեն :

Մկրեանին ծուխը ըլլալը մարդու շիֆ կաւելցունէ , անանկ չէ՞ տիկին :

Ռատամէս

Ծ Ի Ծ Ա Ղ

ՍՏՈՒԴԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Քաղաքային ապուր	Շէհրիյէ չօրպասը :
Մօխրի կոխեց	Քիւլպաստը :
Մի՛ ինայեր	Գըլմա :
Աղջիկ մ'եւելնար	Գըզարթմա :
Ստախօսի լեցում	Եալանձը տօլմասը :
Վարտիք մի՛ կայնիր	Տօնտուրմա :
Վարտիք մի՛ յիշեր	Տօնանմա :
Կոխէ վարտիք	Պաստօն :
Ուսումտաս կողի	Իլիսնատա :
Խղդէ բաց լեղի	Պօղաչաձը :
Խենդ արիւնով	Տէլիքանլը :
Արիւն լիզու	Գանտիլ :

Այս բառերէն կազմեալ նախադասուածիւն մը .

«Վարտիք մի՛ յիշերին իրիկունը կոխէ վարտիքը ձեռքս՝ վարտիք մի՛ կայնիր կերայ , վարտիք մի՛ կայնիրը կերած ատենս կոխէ վարտիքս ձեռքէս ինկաւ» :

Թարգմանութիւն

Տօնանմա ագչամը պաստօն էլիմտէ տօնտուրմա եէտիմ , տօնտուրմայը եէտիղիմ վազըթ պաստօնում էլիմտէն տիւշտիւ :

Փ. ՊՕԼԻՍ

ԲՐԻՄ

Խորամանկ աշակերտ մը անցեալ օր ներգործական, կրաւորական և Ձեզոք բայերուն դերերը հետեւեալ կերպով ներկայացուց իր գաստիարակին.

«Երէկ իրիկուն մայրիկս մեծ եղբորս հետ ծեծեցին հայրիկս, հարսիս ներկայութեանը. Մայրիկս ու եղբայրս ներգործական են, հայրիկս ալ կրաւորական, իսկ հարսս որ բազմոցին անկիւնը նստած կը դիտէր միայն, չեզոք եղաւ» :

Հետաքրքիր փոքրիկ աղջկա մը հարցոց իր մօրը.

— Մայրիկ, հրեշտակ ըսուած բանը ի՞նչ է.

— Զաւակս, հրեշտակները քեզ նման գեղեցիկ աղջիկներու պէս արարածներ են, միայն թէ անոնք թռչունի պէս թռչելու ունին, կը թռչտին.

— Իրա՞ն կըսես, մայրիկ.

— Այո՛, զաւակս:

— Ուրեմն հայրիկս երէկ իրիկուն մեր սպասուհիին «հրեշտակդ իմ» կըսէր կորնէ, ան ալ կը թռչի՞.

— Անտարակոյտ, սիրելի աշխիւ, պատասխանեց մայրը. զգացած զայրոյթը զսպելով, վաղն առտու կանուխ պիտի թռչի, երթայ. . . .

Փաստաբան մը՝ խաբերայութեան ու գողութեան յանցանքով ամբաստանուած ստայակի մը գատը ստանձնելով զայն շահած էր, բայց իր վարձքը ամբողջովին առած չըլլալով, անցեալ օր շուկային մէջ անոր կը հանդպի.

— Ինձի նայէ պարոն, կըսէ, պղտիկ հաշիւ մը ունիս, երբ պիտի վճարես:

— Աստուած խելք տայ. բաւական չէ՛ սուածս, կէս ժամ գատարանին մէջ շաղակրատելուդ փոխարէն:

— Սա պարտքդ տուր կըսեմ, ապա թէ ոչ քեզի դէմ նորէն գատ կը բանամ. վերջը գէշ կըլլայ:

— Գեղի է մնացեր. դատարանին առջև զիս այն աստիճան աղէկ ձիրքերու տէր ցուցնելէ, այնչափ գովեստներ չռայլելով մինչև երկինք բարձրացնելդ ետքը, հիմա ալ աս մարդը գող է, խաբեբայ է ըսելու համար երես պէտք է:

Ճարտար պատասխան մը.

Թեթեւօլիկ երիտասարդ մը պարակն շտ աղջկան մը դէմ ծունկ չոքած կըսէ.

— Ոհ, նաղելիդ գեղաշնորհ. գիտե՞ս արդեօք թէ ի՞նչ է իմ սրտիս ամենէն մօտ առարկան.

— Յիրաւի չեմ գիտեր, կը պատասխանէ օրիորդը քաղցրութեամբ, բայց այս ցուրտ օդին հաւանականաբար բուրդէ բաճկոն մը պիտի ըլլայ:

Քննիչ մը՝ ուսանողին.

— Հօրդ արհեստը ի՞նչ է.

— Հայրս մեռած է, Պ. Քննիչ.

— Զի մեռած ի՞նչպէս կապրէր.

— Նէֆէս տալով առնելով:

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ւ Կ



Առաջին անսխալ կարգացողին նըւէրն է «Փիլիկ աղբօր հարսնիքը» անուն գրքոյկ մը:

ԽԵՆԴԵՐՈՒՆ ԲԺԻՇԿԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷՎ ԵՐԱՐ

(Շարունակութիւն)

Մէր. — Ձեռքէք հոգինիդ սիրէք. կատակերգութիւն կը խաղանք կոր:

Գլէ. — Մ. Փրանսուա, Մ. Փրանսուա, ինքզինքնուդ եկէք:

Բժի. — Ա՛հ օգնութիւն քիչ մը ջուր, տը քօլօներ. քացախ բերէք. շուտ ըրէք: (Ծառայք մանեն և ջուր բերեն):

Մէր. — Ան չէ ա՛, Պ. Տօքթօր, աս խաղին վերջը ո՛ւր պիտի երթայ:

Բժի. — Դուն լռէ՛:

Մէր. — Լռէն ի՞նչ է, ինչո՞ւ պիտի լռեմ:

Բժի. — Եթէ հանդարտ չկենաս, ըզքեզ կը կապեմ:

Մէր. — Բայց պարոն դուք զիս ի՞նչ անհիշելի տեղ դրիք:

Գլէ. — Հայր իմ. Մ. Փրանսուան աշտաները բացաւ, յուշաբերեցաւ:

Փրա. — Գլէ՛ն Գլէ՛ն, ո՛ւր ես. ո՛հ կարծեցի թէ զքեզ դարձեալ կորուսի:

Գլէ. — Ոչ սիրելիս, քովդ եմ:

Փրա. — Ա՛հ Գլէն, գիտե՛ս թէ որչափ կը սիրեմ զքեզ:

Մէր. — Ի՞նչ կըսեն, հոն տեղ ի՞նչ կընեն:

Բժի. — Ձե՛ս տեսնար զիրար կը սիրեն:

Մէր. — Կեցցես պէ մարդ, դուն ալ ձգեր ես որ ուղածնին ընե՞ն:

Բժի. — Իրենց ամուսնանալուն հաճութիւն տալէս ետքը ալ ինչո՞ւ չթողում:

Մէր. — Ալ հիմա պիտի ճաթիմ, ես հաճութիւն չունիմ, ես չեմ ուզեր:

Բժի. — Կամաց կամաց սկսաք համը փախցնել պարոն, կիմանաս... Գլէ՛ն այլիկա, ներս գացէք և Մ. Փրանսուան հօրեղբորդ ներկայացուր:

Մէր. — Ի՞նչպէս. ի՞նչպէս, ներս երթան մի՛:

Բժի. — Մ. Մէրլօի հետ քիչ մը պիտի խօսակցինք ուստի առանձին թողուցէք մեզ: (Ծառաներուն ահանջէն կը բռնուին):

Գլէ. — Ներս երթանք տէր իմ. (Կերթան, բռնելով Մէրլօն կը բռնէ):

Մէր. — Մի թողուք որ երթան պարոն. հիմա պիտի ճաթիմ:

Բժի. — Է՛ ալ եկնցուցիք պարոն, վերջացնենք:

Մէր. — Ալ կարողութիւնս չմնաց. վերջացնենք սա գործը:

Բժի. — (Ծառայից) Հասկցա՛ք. հիմա կրնաք երթալ: (Ծառայք մեկնին):

ՏԵՍԻԼ Թ.

Բժիշկ. Մէրլօ.

Բժի. — Հիմա գանք ձեզի:

Մէր. — Բայց կաղաչեմ չերկնցնենք, ըսելիքնիդ շուտ ըսէք. վասն զի ժամանակ չունիմ, պիտի երթամ:

Բժի. — (Թեւերը սօթտէ) Շատ աղէկ, շատ աղէկ:

Մէր. — Ի՞նչ է ան. կո՞վ պիտի մորթէք ի՞նչ պիտի ընէք:

Բժի. — (Մեկուսի) Ինձի կարգապահութիւն պէտք է. մի վախնաք պարոն քնասակար բան մը չէ:

Մէր. — Նստեցէք որ եղբորդույս վրայօք խօսիմ. անիկա քիչ մը խենդ է դուք ալ ելաք աղջիկնիդ անոր տալու:

Բժի. — Ո՛չ, ինձի նայէ՛. դուն իմ գործիս չես կրնար խառնուիլ:

Մէր. — Աղէկ ա՛, աղդարարութիւն. ներնուդ մէջ ասանկ բան մը գրած չէիք:

Բժի. — Ժիւէներնուդ այսինքն բաճկոնիդ կոճակները քակէ:

Մէր. — Ինչո՞ւ:

Բժի. — (Սիրտը մտիկ կընէ) Մերերար:

Մէր. — Ալ համբերութիւնս հատաւ. հիմա պիտի ճաթիմ:

Բժի. — Սնտուկին չինուածքին մէջ պակաս բան մը չեմ տեսներ:

Մէր. — Ի՞նչ հրամայեցիր :

Բժի. — Մի վախճար բան չիկայ կոճկըվէ :

Մէր. — Եթէ ինձ մտիկ կ'ընէք՝ աղջիկնիդ եղբորորդւոյս մի տաք :

Բժի. — Կեցիր գլուխդ ալ մտիկ ընենք. (Գլուխը կը սեղմէ)

Մէր. — Այ, այ, զիս խեղդե՞լ կուզես մարդ :

Բժի. — (Մտիկ ընելէն ետքը) Խորունկ բայց մէջը պարապ :

Մէր. — Կաղաչեմ Պ. Տօքթօր. սա գործերէն վաղ եկու :

Բժի. — Կաղաչեմ մի բարկանայք :

Մէր. — Ի՞նչպէս չի բարկանամ, հիմա կատաղութենէս պիտի ճաթիմ, արիւնս սկսաւ գլուխս ցատկել մտիկ ըրէք ինձ, զիս դժայնել կուզես պարոն, էօֆաւ ի՞նչ փորձանքի հանդիպեցանք ով Աստուած. ես ձեր միտքը հասկցայ, դուք խենդերուն բժիշկն էք, ունեցած արհեստնիդ. և վարպետութիւննիդ աշխարհի իմացնել կը փափաքիք. այս պատճառաւ դեմերնիդ ելլող մարդը խենդ կարծելով փորձերնիդ անոր վրայ կընէք, սակայն դիտցած եղիք թէ զուր տեղը կաշխատիք, ինչու որ իմ վրաս խենդութեան նշաններ չպիտի կրնաք դտնել, բնտի եկէք վերջացուցէք սա գործերը, խօսք կուտամ ձեզի որ խենդ մը աղէկցնելու համար որչափ ստակ որ պիտի պահանջէք նոյն պումարը ձեզի կը վճարեմ, ասոր ի՞նչ կըսէք :

Բժի. — Ամեն ինձ գիտող հիւանդներն ալ այսպէս կըսեն օձիքնին ձեռքէս ազատելու համար, բայց չեն կրնար զիս համոզել :

Մէր. — Ըսել է որ զիս բռնութեամբ հոս վար պիտի դնէք, ալ բաւական է շուտով եղբորորդւոյս քով տարէք զիս :

Բժի. — Մի աճապարէք :

(Շար)



ՆԵՐՍԷՍ ԽԱՉԻԿԵԱՆ

և

ԼԵՆԻՆ ԱՃԷՄԵԱՆ

ՈՍԿԵՐԻՉ

Հայոց եկեղեցիին դիմացը, Վառնա

Ոսկերչութեան վերաբերեալ ամեն տեսակ յանձնարարութիւններ կը կատարուին գոհացուցիչ պայմաններով. արծաթի և ոսկիի վրայ ծաղկագիր փորագրութիւններ, ինչպէս նաեւ շատ ձեւով մատանիներ, օղեր և ապարանջաններ կը պատրաստուին : Ամէն յաճախորդներ արդէն դժ ճնացած են այս երկու վարպետներէն :

10

ՄՈՒՀԻՄ ԻԼԱՆ

Սինկէր ֆապրիքսը մասնաւորութեան 13.660,051 Նօմէրօլու պիր տտէտ տիքիշ մաքինասը վարնատա Գատըր Պապա մաշալլէսինտէ 1364 Նօմէրօլու խանէտէ սաքին պիշարէ պիր գատընըն մալի օլարապ թարիխտէն 10 կիւն մուգատտէմ սրրգաթ օլունմուշ օլուպ, կէրէք վարնատա վէ կէրէք էթրաֆ քէօլէրինտէ պուլունան ինսանիյէթ քէրվէր էհալինին պալատէ զիքր օլունան Նօմէրօլու պիր մաքինա կէօրտիքլէրինտէ կաղէթամըզ իտարէ խանէսինէ խապէր վէրմէլէրի խասսէթէն մէրճու վէ իսթիրհամ օլունտոր :

Մուխպիրին 10 ֆրանք իբրամիյէսի փար տրր :

Отговорничъ М. Скововъ
Печатница „Взаимтъ“ — Варна.